



## Ձեր ամենօրյա բանկային գործարքները 24/7 ռեժիմով՝ ցանկացած վայրից, ցանկացած պահի

Ինտերնետային բանկային ծառայությունը Ձեզ հնարավորություն է ընձեռում ցանկացած պահի կառավարել Ձեր ֆինանսական միջոցները: Դուք կարող եք ցանկացած պահի տեսնել և կառավարել Ձեր հաշիվները տանից, գրասենյակից կամ ճամփորդելիս:

Ձեր հաշիվների 24/7 հասանելիությունն ինտերնետի միջոցով	✓
Ձեր ֆինանսների անվտանգ կառավարում ցանկացած վայրից	✓
ԱՆՎՃԱՐ փոխանցումներ HSBC Բանկ Հայաստանի հաշիվների միջև	✓
ԱՆՎՃԱՐ փոխանցումներ ՀՀ դրամով Հայաստանի այլ բանկերի	✓
Փոխանցումներ բոլոր հիմնական արժույթներով ցանկացած ուղղությամբ	✓
Վարկերի և քարտերի ԱՆՎՃԱՐ մարումներ	✓
Հաշիվների մնացորդների և գործարքների ԱՆՎՃԱՐ դիտում	✓
ԱՌԱՆՑ լրացուցիչ ծրագրային ապահովվածության	✓
ԱՌԱՆՑ սպասարկման ամսական վճարի	✓

Էյչ-Էս-Բի-Սի-ն շարունակաբար աշխատում է որպեսզի Ձեր օնլայն գործարքների համար ապահովի անվտանգության բարձր ստանդարտներ: Ձեր ինտերնետային բանկային գործառնությունները պաշտպանելու համար Էյչ-Էս-Բի-Սի-ն օգտագործում է **128-բիթ SSL** կանխագրումը<sup>2</sup>, որը հանդիսանում է ներկայիս ամենաապահով տեխնոլոգիաներից մեկը: Ավելին, համակարգ մուտք գործելը և ինտերնետային բանկային ծառայության միջոցով բազմազան գործարքների իրականացումը լրացուցիչ պաշտպանված են անվտանգության սարքի օգտագործմամբ:

<sup>1</sup>Ինտերնետային/Մոբայլ բանկային ծառայությունները տրամադրվում են միայն ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներին:

<sup>2</sup>Կանխագրումը մի գործընթաց է, որը գաղտնագրում է Ձեր տվյալները մինչև ինտերնետի միջոցով դրանց ուղարկումը, ինչպես նաև տրամադրում է Ձեր տեղեկությունների տեղափոխման համար ապահով ուղի:

## Ծառայության սակագներ

- Ծառայության գրանցման միանվագ վճար - Անվճար
- Անսական օգտագործման վճար - Անվճար
- Օնլայն անվտանգության սարքի փոխարինում նորով
  - Սարքի անսարքության դեպքում – Անվճար
  - Սարքի կորստի կամ գողության դեպքում (երբ այն ֆիզիկապես առկա է) – 5,000 ՀՀ դրամ\*
- Բանկային ծառայությունների օգտագործում - համաձայն ծառայությունների սակագների

## Ծառայությունների ամբողջական ցանկ

- 24 / 7 ռեժիմով տեսնել Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում առկա Ձեր հաշիվները
- Իրականացնել Ձեր ամենօրյա բանկային գործարքները, ստուգել հաշիվների մնացորդները և տեսնել հաշիվների շարժը
- Փոխանցումներ կատարել Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում առկա Ձեր հաշիվների միջև կամ Հայաստանում գործող այլ բանկերի հաշիվներին
- Փոխանցումներ կատարել Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի այլ հաճախորդներին կամ Հայաստանում գործող այլ բանկերի հաշիվներին
- Արտարժույթով գումարներ փոխանցել արտասահման
- Կատարված գործարքների մասին ստանալ **SMS** տեղեկացումներ Ձեր բջջային հեռախոսին
- Կատարել կրեդիտ քարտի վճարումներ
- Ստուգել կրեդիտ քարտի մնացորդը\*\*
- Կատարել վարկերի մարումներ
- Օնլայն դիմել տարբեր բանկային ծառայությունների համար
- Ձևակերպել ապագա պարբերական փոխանցումների իրականացման հանձնարարական
- Ստանալ քաղվածքները և գործարքների ստացականները ինտերնետային բանկային ծառայության միջոցով՝ էլեկտրոնային տարբերակով
- Օգտվել համակարգի կողմից առաջարկվող անհատական ծանուցումներից և հայտարարություններից
- Փոփոխել/թարմացնել Ձեր անձնական տվյալները

- Պատվիրել չեկային գրքույկներ և կասեցնել չեկային վճարումներ
- Ուղարկել հաղորդագրություններ բանկին՝ ԷԽ-Էս-Բի-Սի-ի ինտերնետային բանկային համակարգի միջոցով
- Բացել նոր ավանդային հաշիվներ և փոփոխել ավանդների մարման պայմանները
- Բացել նոր խնայողական և ընթացիկ հաշիվներ
- Կատարել հարցումներ ժամկետային ավանդների տոկոսադրույքների և ընթացիկ/խնայողական հաշիվների մնացորդների մասին

## Կարևոր նշում

Բանկը կարող է վաղաժամկետ դադարեցնել Հաճախորդի հետ կնքած Ինտերնետ/Մոբայլ բանկային ծառայությունից օգտվելու պայմանագիրը, եթե վերջին 12 ամիսների ընթացքում Հաճախորդի Ինտերնետ/Մոբայլ բանկային համակարգի օգտագործողի անունը ակտիվ չի եղել (Հաճախորդը համակարգ մուտք չի գործել):

<sup>1</sup>Ինտերնետային/Մոբայլ բանկային ծառայությունները տրամադրվում են միայն Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներին:

\* Ներառյալ ԱԱՀ

\*\* Կրեդիտ քարտի մնացորդը ներկայացվում է նախորդ բանկային օրվա դրությամբ:

## Ժամանակի և գումարի կրկնակի խնայողություն

Օգտվեք արտոնյալ սակագներից՝ նշված ծառայությունները ինտերնետային բանկային ծառայությունների միջոցով իրականացնելիս

Ծառայություն	Գործող սակագին	Արտոնյալ սակագին
Լրացուցիչ հաշվի բացում (միայն ինտերնետային բանկային ծառայության միջոցով)	3,000 ՀՀ դրամ	անվճար
ՀՀ դրամով փոխանցումներ Հայաստանում	300 ՀՀ դրամ	անվճար
Բանկումատային քարտի վերաթողարկում	3,000 ՀՀ դրամ	անվճար <sup>2</sup>
Արտարժույթային փոխանցումներ (ԱՄՆ դոլարով և Եվրոյով)	0.3% (Նվազագույնը ՀՀ դրամ 6,000)	0.1% (Նվազագույնը ՀՀ դրամ 6,000)
Հաշվեկշռի հաստատման/ բանկային հաշվի/վարկի վերաբերյալ տեղեկանքներ	5,000 ՀՀ դրամ*	1,000 ՀՀ դրամ <sup>3*</sup>
Բանկային հաշվից քաղվածքի/գործարքի վավերացման փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում 6 ամիս և ավել վաղեմության դեպքում	3,000 ՀՀ դրամ*	1,000 ՀՀ դրամ <sup>4*</sup>

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել Ինտերնետային Բանկային ծառայության տեխնիկական աջակցության կենտրոն՝ **+374 (60) 655 444** հեռախոսահամարով:

<sup>1</sup> Ինտերնետային/Մոբայլ բանկային ծառայությունները տրամադրվում են միայն Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներին:

<sup>2</sup> Վերաթողարկված բանկոմատային քարտը կուղարկվի Ձեր նախընտրած մասնաճյուղը դիմումի ստացման օրվանից **3** աշխատանքային օրվա ընթացքում:

<sup>3</sup> Տեղեկանքը կուղարկվի Ձեր նախընտրած մասնաճյուղը դիմումի ստացման օրվանից **3-5** աշխատանքային օրվա ընթացքում:

<sup>4</sup> Քաղվածքի/գործարքի վավերացման փաստաթղթի կրկնօրինակը կուղարկվի Ձեր նախընտրած մասնաճյուղը դիմումի ստացման օրվանից **3-5** աշխատանքային օրվա ընթացքում:

\* Ներառյալ ԱԱՀ:

Թարմացվել է՝ 10/01/2019 15:00